

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՏԱՎՈՒՇ

ՖԻԶԻԿԱ

ԹԵՄԱ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթղթը:**


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ո՞րն է տեղափոխության ճիշտ սահմանումը:

- 1) Այն վեկտորը, որի թվային արժեքը հավասար է նյութական կետի անցած ճանապարհին, կոչվում է տեղափոխություն:
- 2) Նյութական կետի հետագծի երկարությունը կոչվում է տեղափոխություն:
- 3) Կոորդինատային առանցքների սկզբնակետը նյութական կետի վերջնական դիրքին միացնող վեկտորը կոչվում է տեղափոխություն:
- 4) Նյութական կետի սկզբնական դիրքը վերջնական դիրքին միացնող վեկտորը կոչվում է տեղափոխություն:


2 Նկարում պատկերված է մարմնի հավասարաչափ շարժման արագության մոդուլի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է նրա անցած ճանապարհը 5 վ-ում:



- 1) 8 մ
- 2) 40 մ
- 3) 1,6 մ
- 4) 5 մ

3 v արագությամբ ուղղաձիգ դեպի վեր նետած մարմինը որոշ ժամանակ անց ընկավ գետնին: Գրաֆիկներից n ըն է համապատասխանում OX առանցքի վրա մարմնի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: OX առանցքն ուղղված է ուղղաձիգ դեպի վեր: Օղի դիմադրությունն անտեսել:

- 1) q
- 2) η
- 3) u
- 4) p



4 Ինչի՞ց է կախված գապանակի կոշտությունը:

- 1) գապանակի չափերից, ձևից և նյութի տեսակից:
- 2) բոլոր պատասխանները սխալ են
- 3) դեֆորմացիայի չափից
- 4) առաձգականության ուժից

5


Ո՞ր դեպքում է մարմինն անկշռության վիճակում:

- 1) Երբ մարմնի վրա ազդում է միայն ծանրության ուժը:
- 2) Երբ մարմինը գտնվում է Երկրի բևեռում:
- 3) Երբ մարմնի վրա ոչ մի ուժ չի ազդում:
- 4) Երբ մարմնի վրա ազդող ուժերի համագործը զրո է:

6

Ո՞ր նկարում են ճիշտ պատկերված Երկրի և Արեգակի փոխազդեցության ուժերը:

- 1) գ
- 2) դ
- 3) ա
- 4) բ



7

a արագացմամբ շարժվող սայլակի վրա դրված m զանգվածով մարմինը գտնվում է դադարի վիճակում: Սայլակի և մարմնի միջև շփման գործակիցը μ է: Ինչի՞ է հավասար մարմնի վրա ազդող շփման ուժը:

- 1) μmg
- 2) ma
- 3) 0
- 4) μma

8

Մեղմված զսպանակի պոտենցիալ էներգիան փոքրացավ 9 անգամ: Ինչպե՞ս փոխվեց այդ դեպքում զսպանակի դեֆորմացիայի չափը:

- 1) փոքրացավ 3 անգամ
- 2) չփոխվեց
- 3) մեծացավ 3 անգամ
- 4) մեծացավ 9 անգամ

9

Նշված միավորներից ո՞րն է աշխատանքի չափման միավորը ՄՀ-ում:

- 1) 1 Վտ
- 2) 1 Պա
- 3) 1 Ջ
- 4) 1 Ն

10 Նույն հեղուկի մեջ լրիվ ընկղմված են միևնույն շառավղով հոծ և սնամեջ գնդեր: Համեմատել նրանց վրա ազդող արքիմեդյան ուժերը:

- 1) Երկու գնդերի վրա ազդող արքիմեդյան ուժերը հավասար են:
- 2) Պատասխանը կախված է գնդերի նյութի խտությունից:
- 3) Սնամեջ գնդի վրա ավելի մեծ արքիմեդյան ուժ է ազդում:
- 4) Հոծ գնդի վրա ավելի մեծ արքիմեդյան ուժ է ազդում:

11 Ո՞ր բանաձևով է որոշվում k կոշտությամբ զսպանակին ամրացված m զանգվածով բեռի ներդաշնակ տատանումների պարբերությունը:


- 1) $2\pi\sqrt{\frac{m}{k}}$
- 2) $2\pi\sqrt{\frac{k}{m}}$
- 3) $\sqrt{\frac{k}{m}}$
- 4) $\frac{1}{2\pi}\sqrt{\frac{k}{m}}$

12 Ո՞ր միջավայրում են տարածվում մեխանիկական ալիքները:

- 1) պինդ, հեղուկ և գազային
- 2) պինդ, հեղուկ, գազային միջավայրերում և վակուումում
- 3) միայն վակուումում
- 4) միայն պինդ և հեղուկ

13 Ինչպե՞ս է փոխվում հաստատուն զանգվածով իդեալական գազի ծավալը α վիճակից β վիճակին անցնելիս:

- 1) փոքրանում է
- 2) կմեծանա կամ կփոքրանա
- 3) չի փոխվում
- 4) մեծանում է



14 Հաստատուն զանգվածով իդեալական գազի ծավալը և բացարձակ ջերմաստիճանը մեծացրին 2 անգամ: Ինչպե՞ս փոխվեց գազի ճնշումը:

- 1) չփոխվեց
- 2) փոքրացավ 2 անգամ
- 3) մեծացավ 4 անգամ
- 4) մեծացավ 2 անգամ

15

Սենյակում ո՞ր գազի մոլեկուլների համընթաց շարժման միջին կինետիկ էներգիան է ավելի մեծ:

- 1) ջրածնի
- 2) բոլոր գազերի համար այն նույնն է
- 3) թթվածնի
- 4) ազոտի

16

Երկաթե չորսուի ջերմաստիճանը $41\text{ }^{\circ}\text{C}$ է, իսկ փայտե չորսուինը՝ $285\text{ }^{\circ}\text{C}$: Ո՞ր չորսուի ջերմաստիճանն է ավելի բարձր:

- 1) հավասար են
- 2) Ջերմաստիճանները համեմատել չի կարելի, քանի որ արտահայտված են տարբեր միավորներով:
- 3) փայտե չորսուինը
- 4) երկաթե չորսուինը

17

Ի՞նչ եղանակով է էներգիան Արեգակից հաղորդվում Երկիր:

- 1) կոնվեկցիայի և ճառագայթման միջոցով
- 2) կոնվեկցիայի միջոցով
- 3) ջերմահաղորդականության միջոցով
- 4) ճառագայթման միջոցով

18

Կհալվի՞ սառույցը կամ կսառչի՞ արդյոք ջուրը սենյակում, որտեղ պահպանվում է $0\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանը:

- 1) սառույցը կհալվի, իսկ ջուրը չի կփոխարկվի սառույցի
- 2) սառույցը չի հալվի, իսկ ջուրը չի կփոխարկվի սառույցի
- 3) սառույցը կհալվի, իսկ ջուրը կփոխարկվի սառույցի
- 4) սառույցը չի հալվի, իսկ ջուրը կփոխարկվի սառույցի

19


Ինչպե՞ս կարելի է անոթում՝ մխոցի տակ չհազեցած գոլորշին դարձնել հազեցած:

- 1) գոլորշու ներքին էներգիան մեծացնելով
- 2) այլ գազ ավելացնելով
- 3) գոլորշու ջերմաստիճանը բարձրացնելով
- 4) գոլորշու ծավալը փոքրացնելով

20 Կեռա՞ արդյոք ջուրը կաթսայում, եթե այն տեղադրենք գազօջախով տաքացվող մեկ այլ կաթսայում եռացող ջրի մեջ:

- 1) Կեռա, եթե մեծ կաթսայի ջուրը երկար եռացնենք:
- 2) Կեռա, եթե փոքր կաթսայի ջրի ջանգվածը բավականաչափ փոքր է:
- 3) Կեռա:
- 4) Որքան էլ տաքացնենք, չի եռա:

21 Երկու կետային լիցքեր տեղադրված են A և B կետերում: Ինչպե՞ս կփոխվի նրանց փոխազդեցության ուժը, եթե մի լիցքը մնա A կետում, իսկ մյուսը B կետից տեղափոխվի C կետը:



- 1) կմեծանա 2,25 անգամ
- 2) չի փոխվի
- 3) կփոքրանա 1,5 անգամ
- 4) կփոքրանա 2,25 անգամ

22 C էլեկտրաունակությամբ կոնդենսատորը լիցքավորել են q լիցքով և անջատել են հոսանքի աղբյուրից: Ի՞նչ նվազագույն աշխատանք պետք է կատարվի, որպեսզի կոնդենսատորի թիթեղների հեռավորությունը մեծացվի երկու անգամ:


- 1) $2q^2C$
- 2) q^2C
- 3) $3q^2/2C$
- 4) $q^2/2C$

23 Ինչպե՞ս կփոխվի հաղորդալարի դիմադրությունը, եթե այն բաժանենք երեք հավասար մասի և ստացված կտորներն իրար միացնենք զուգահեռաբար:

- 1) կփոքրանա 9 անգամ
- 2) կմեծանա 3 անգամ
- 3) չի փոխվի
- 4) կփոքրանա 3 անգամ


24 Նկարում պատկերված հաղորդալարերը պատրաստված են նույն նյութից: Ո՞ր գույքը հնարավորություն կտա փորձով հայտնաբերվել դիմադրության կախումը հաղորդչի երկարությունից:

- 1) q
- 2) η
- 3) u
- 4) F



25


Ո՞րն է նկարում պատկերված շղթայում իդեալական վոլտաչափի ցուցմունքը:



- 1) $U = \frac{\varepsilon r}{R+r}$
- 2) $U = \varepsilon$
- 3) $U = \frac{\varepsilon R}{R+r}$
- 4) $U = \frac{\varepsilon}{R+r}$

26

Մագնիսական դաշտն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը: Ի՞նչ ուղղություն ունի a-b հաղորդալարի վրա ազդող Ամպերի ուժը:



- 1) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը:
- 2) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի նկարը:
- 3) Ուղղված է դեպի ձախ:
- 4) Ուղղված է դեպի աջ:

27

Նույն լիցքով և զանգվածների $m_1/m_2 = 2$ հարաբերությամբ մասնիկները համասեռ մագնիսական դաշտի ազդեցությամբ կատարում են շրջանագծային շարժում: Մասնիկների կինետիկ էներգիաները հարաբերությունը $W_{կ1}/W_{կ2} = 4$: Որքա՞ն է մասնիկների հետագծերի R_1/R_2 հարաբերությունը:

- 1) 2
- 2) $2\sqrt{2}$
- 3) $1/\sqrt{2}$
- 4) $\sqrt{2}$

28

Ինչպե՞ս կփոխվի կոճի մագնիսական դաշտի էներգիան, եթե նրա մեջ հոսանքի ուժը մեծացնենք չորս անգամ:

- 1) կփոքրանա 4 անգամ
- 2) կփոքրանա 16 անգամ
- 3) կմեծանա 4 անգամ
- 4) կմեծանա 16 անգամ

29

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Փոփոխական հոսանքի ուժի գործող արժեքը...

- 1) միշտ հավասար է հոսանքի ակնթարթային արժեքին:
- 2) կարող է մեծ, փոքր կամ հավասար լինել հոսանքի ակնթարթային արժեքին:
- 3) միշտ մեծ է հոսանքի ակնթարթային արժեքից:
- 4) միշտ փոքր է հոսանքի ակնթարթային արժեքից:

30

Մարմնի և հարթ հայելում նրա պատկերի միջև հեռավորությունը 40 սմ է: Որքա՞ն կլինի այդ հեռավորությունը, եթե մարմինը հայելուց հեռացնենք 10 սմ-ով:

- 1) 60 սմ
- 2) 100 սմ
- 3) 10 սմ
- 4) 20 սմ


31

Սուզորդը ջրի հատակից դիտում է իր գլխավերևում, ջրի մակերևույթից 1 մ բարձրությամբ կախված լուսարձակող լամպը: Ինչպիսի՞ն է լամպի թվացյալ բարձրությունը, ջրի մակերևույթից:

- 1) փոքր է 1 մ-ից
- 2) հարցի պատասխանը միանշանակ չէ
- 3) 1 մ
- 4) մեծ է 1 մ-ից

32

Ինչպե՞ս է փոխվում հավաքող ոսպնյակում առարկայի պատկերի գծային չափը այն F կետից $2F$ կետն զուգահեռ տեղափոխելիս, ինչպես պատկերված է նկարում:



- 1) չի փոխվում
- 2) կարող է մեծանալ կամ փոքրանալ
- 3) մեծանում է
- 4) փոքրանում է

33

Ինչո՞ւ է թուղթը սպիտակ երևում:

- 1) Այն բեկում է բոլոր գույներին համապատասխանող լուսային ալիքները:
- 2) Այն կլանում է միայն մեծ հաճախությամբ լուսային ալիքները:
- 3) Այն լավ անդրադարձնում է բոլոր գույներին համապատասխանող լուսային ալիքները:
- 4) Այն կլանում է բոլոր գույներին համապատասխանող լուսային ալիքները:

34

Ո՞ր երևույթը հնարավոր չէ բացատրել երկրաչափական օպտիկայի օրենքներով:

- 1) լույսի բեկումը
- 2) ստվերի առաջացումը
- 3) լույսի անդրադարձումը
- 4) լույսի դիֆրակցիան

35

Երկրին v արագությամբ մոտեցող հրթիռից լույս է արձակվում: Որքա՞ն է այդ լույսի արագությունը Երկրի նկատմամբ:

- 1) $c + v$
- 2) $\sqrt{c^2 + v^2}$
- 3) c
- 4) v

36

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
Եթե չեզոք ատոմից պոկվի էլեկտրոն, ապա այն ...

- 1) կմնա էլեկտրաչեզոք:
- 2) կլիցքավորվի բացասական լիցքով:
- 3) կդառնա բացասական իոն:
- 4) կդառնա դրական իոն:

37

Ո՞ր մեծությանն է ուղիղ համեմատական ֆոտոնի էներգիան:

- 1) լույսի հաճախությանը
- 2) լույսի ալիքի երկարությանը
- 3) լույսի արագության քառակուսուն
- 4) լույսի արագությանը

38

Ինչպե՞ս է փոխվում ֆոտոէֆեկտի ժամանակ մետաղից պոկված էլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան ընկնող լույսի ուժգնությունը 2 անգամ մեծացնելիս:

- 1) մեծանում է 2 անգամ
- 2) չի փոխվում
- 3) մեծանում է ավելի քան 2 անգամ
- 4) փոքրանում է ավելի քան 2 անգամ

39

Ի՞նչ է α -ճառագայթումը:

- 1) հելիումի միջուկների հոսք
- 2) արագ էլեկտրոնների հոսք
- 3) ջրածնի միջուկների հոսք
- 4) նեյտրոնների հոսք

40

Ո՞ր մասնիկի հակամասնիկն է պոզիտրոնը:

- 1) պրոտոնի
- 2) նեյտրինոյի
- 3) էլեկտրոնի
- 4) նեյտրոնի

41

Տրանսֆորմատորի առաջնային փաթույթում լարումը՝ 250 Վ է: Որքա՞ն է լարումը երկրորդային փաթույթի ծայրերին, եթե տրանսֆորմացիայի գործակիցը 10 է:

42

Որքա՞ն ճանապարհ է անցնում լույսի ճառագայթը ջրում 1 մկվ-ի ընթացքում, եթե ջրի բեկման ցուցիչը $\frac{4}{3}$ է: Լույսի արագությունը վակուումում $3 \cdot 10^8$ մ/վ է:

43

200 գ զանգվածով գնդիկը կատարում է $x = 0,05\sin(2\pi t)$ օրենքով փոփոխվող ներդաշնակ տատանումներ, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ միավորներով: Որքա՞ն է գնդիկի կինետիկ էներգիայի առավելագույն արժեքը: Ընդունել $\pi = 3$: Պատասխանը բազմապատկել 10^3 -ով:

44

Մինչև n ՝ ջերմաստիճանը (ըստ Կելվինի) պետք է տաքացնել 27°C ջերմաստիճանի հաստատուն զանգվածով օդը, որպեսզի նրա ծավալը իզոբար պրոցեսի արդյունքում մեծանա 2,5 անգամ:

(45-46) $C_1 = 1$ մկՖ և $C_2 = 2$ մկՖ, էլեկտրատունակություններով կոնդենսատորները միացված են հաջորդաբար: C_1 էլեկտրատունակությամբ կոնդենսատորի լարումը՝ $U_1 = 160$ Վ:

45

Որքա՞ն է երկրորդ կոնդենսատորի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^5 -ով:

46

Որքա՞ն է երկրորդ կոնդենսատորի լարումը:

(47-48) Լույսի ճառագայթն օդից ընկում է ապակու վրա, որի բեկման ցուցիչը $\sqrt{3}$ է: Բեկման անկյունը 2 անգամ փոքր է անկման անկյունից:

47

Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը:

48

Ապակու մեջ անցնելիս ճառագայթը քանի՞ աստիճանով է շեղվում իր սկզբնական ուղղությունից:

(49-50) 6 կգ զանգվածով մարմինը գտնվում է հորիզոնական հարթության վրա: Մարմնի վրա ազդող 20 Ն ուժը հորիզոնական հարթության հետ կազմում է 30° անկյուն և ուղղված է դեպի վեր: Հարթության և մարմնի միջև շփման գործակիցը 0,1 է: Ընդունել $g = 10$ մ/վ², $\sqrt{3} = 1,7$:

49 Որքա՞ն է մարմնի վրա ազդող սահքի շփման ուժը:

50 Որքա՞ն է մարմնի արագացումը:

(51-52) 700 գ զանգվածով խորանարդը լողում է ջրի մակերևույթին: Ջրի խտությունը 1000 կգ/մ^3 է, ազատ անկման արագացումը՝ 10 մ/վ^2 :

51 Որքա՞ն է խորանարդի վրա ազդող արքիմեդյան ուժը:

52 Որքա՞ն է ջրում խորանարդի խորասուզված մասի ծավալը: Պատասխանը բազմապատկեք 10^4 -ով:

(53-54) 4 կգ զանգվածով մարմինը սահում է թեք հարթության գագաթից մինչև ստորոտ: Այդ ընթացքում մարմնի ջերմաստիճանը մեծանում է 0,2 Կ-ով: Համարել, որ մարմնի սկզբնական մեխանիկական էներգիայի 40 %-ը ծախսվել է նրա տաքացման համար: Մարմնի տեսակարար ջերմունակությունը 1200 Ջ/(կգ·Կ) է: Ազատ անկման արագացումը 10 մ/վ² է:

53 Որքանո՞վ է փոխվել մարմնի ներքին էներգիան:

54 Որքա՞ն է թեք հարթության բարձրությունը:

(55-57) Ուղղաձիգ դրված գլանում $m_1 = 5$ կգ զանգվածով մխոցի տակ գտնվում է իդեալական գազ: Գազի բացարձակ ջերմաստիճանը բարձրացրին երկու անգամ և որպեսզի մխոցը գտնվի նախկին վիճակում, նրա վրա դրեցին m_2 զանգվածով բեռ: Մխոցի լայնական հատույթի մակերեսը՝ $S = 0,001$ մ² է, մթնոլորտային ճնշումը՝ $p_0 = 10^5$ Պա: Մխոցի և գլանի միջև շփումն անտեսել, ընդունել՝ $g = 10$ մ/վ²:

55 Որքա՞ն է m_2 զանգվածը:

56 Որքա՞ն է գազի ճնշումը տաքացնելուց հետո: Պատասխանը բազմապատկեք 10^{-5} -ով:

57 Քամի՞ անգամ կմեծանար գազի ծավալը, եթե տաքացնելուց հետո նրա վրա բեռ չդնեին:

(58-60) Հավաքող բարակ ոսպնյակը էկրանին տալիս է լամպի 2 անգամ խոշորացված իրական պատկերը: Երբ, անշարժ պահելով լամպը և էկրանը, ոսպնյակը 36 սմ-ով մոտեցրին էկրանին, իրական պատկերը ստացվեց 2 անգամ փոքրացված:

58

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

59

Մինչ մոտեցնելը որքա՞ն է լամպի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

60

Որքա՞ն էր լամպի և էկրանի հեռավորությունը: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

(61-64) X առանցքով շարժվող մարմնի արագության պրոյեկցիան ժամանակից կախված փոխվում է $v_x = 40 - 20t$ օրենքով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ միավորներով:

61

Ժամանակի n ր պահին մարմնի արագությունը հավասար կլինի զրոյի:

62

Որքա՞ն է մարմնի անցած ճանապարհը, երբ նրա արագությունը հավասարվում է զրոյի:

63

Որքա՞ն է մարմնի անցած ճանապարհը առաջին չորս վայրկյանի ընթացքում:


64

Որքան է մարմնի տեղափոխության մոդուլը առաջին չորս վայրկյանի ընթացքում:

(65-68) Նկարում պատկերված շղթայում $R_3 = 20$ Օմ, $R_4 = 24$ Օմ, $R_1 = R_2 = R_5 = R_6 = 3$ Օմ: Շղթայի ծայրերին կիրառված է $U = 36$ Վ լարում:

65

Որքան է շղթայի ընդհանուր դիմադրությունը:



66

Որքա՞ն է հոսանքի ուժը R_6 դիմադրությունում:

67

Որքա՞ն է հոսանքի ուժը R_4 դիմադրությունում: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

68

Որքա՞ն է պոտենցիալների տարբերությունը A և B կետերի միջև:

69

Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) Մոլեկուլային-կինետիկ տեսության հիմնադրույթները վերաբերում են միայն գազերին:
- 2) Նյութի մոլեկուլների անկանոն, ջերմային շարժումն անվանում են բրոունյան շարժում:
- 3) Մոլեկուլների ջերմային շարժման միջին կինետիկ էներգիան համեմատական է բացարձակ ջերմաստիճանին:
- 4) Եթե Ցելսիուսի սանդղակով ջերմաստիճանը փոխվել է 7°C -ով, ապա Կելվինի սանդղակով այդ նույն փոփոխությունը կլինի 7°K :
- 5) Եթե տվյալ զանգվածով իդեալական գազի ճնշումն ու ջերմաստիճանը մեծացնենք երկու անգամ, ապա նրա ծավալը կփոքրանա երկու անգամ:
- 6) Ադիաբատ պրոցեսի ընթացքում իդեալական գազի ներքին էներգիան չի փոխվում:

70

Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) Ֆոտոնի էներգիան ուղիղ համեմատական է լույսի հաճախությանը:
- 2) Ֆոտոէֆեկտ կոիտվի, եթե քվանտի էներգիան մեծ լինի մետաղի ելքի աշխատանքից:
- 3) Մետաղից էլեկտրոններ պոկող լույսի հաճախությունը երկու անգամ մեծացնելիս պոկված էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան նույնպես մեծանում է երկու անգամ:
- 4) Երբ միջուկն արձակում է α -մասնիկ, նրա կարգաթիվը նվազում է 4-ով, իսկ զանգվածային թիվը՝ 2-ով:
- 5) β -տրոհումը միջուկի կարգաթիվը մեծացնում է 1-ով, իսկ զանգվածային թիվը չի փոխում:
- 6) α -մասնիկը ջրածնի ատոմն է, որը կորցրել է էլեկտրոնը: